ArmLur.am

ISSN 1829-2763

ՕՐԱԹԵՐԹ ԲՈԼՈՐԻ ԵՎ ԱՄԵՆ ԻՆՉԻ ՄԱՍԻՆ

Ժողովուրդ

11 մայիսի շաբաթ 2024
տպագրության ԺԳ տարի

62
(2912)

100 դրամ

քաղ. Երեւան, Աբովյան 22ա/3 (0010) + 374 10 546423 info.armlur@gmail.com, info.zhoghovurd@gmail.com

Մ. ՓԱՇԻՆՅԱՆԻ ԱՇԽԱՏԱՎԱՐՁԸ ՄԵԿ ՏԱՐԻ ԱՆՑ ԱՃԵԼ Է 4.2 ՄԻԼԻՈՆ ԴՐԱՄՈՎ

Գ.1. ՀԱՅՏԱՐԱՐԱՏՈՒ ՊԱՇՏՈՆԱՏԱՐ ԱՆՁԻ ԸՆՏԱՆԻՔԻ ԱՆԴԱՄԻ ԵԿԱՄՈՒՏՆԵՐ

Գ.1.1. Հաշվետու տարվա եկամուտներ

NN ը/կ	Եկամտի տեսակը	Եկամուտ վճարող կազմակերպության անվանումը կամ ֆիզիկական անձի անունը, ազգանունը և հայրանունը	Եկամուտ վճարողի հասցեն	Հայտարարատուի և եկամուտ վճարողի միջև առկա կապի բնույթը	Ստացված եկամտի գումարը և արժույթը	Բնամթերային ձևով ստացված եկամուտը
1.	Աշխատանքի վարձատրություն և/կամ դրան հավասարեցված այլ վճարումներ	Digitain LLC	Պաշտպանված	Պաշտպանված	Դ 6,693,842	Դ 0
Ընդամենը					**Դ 6,693,842**	**Դ 0**

Գ.1. ՀԱՅՏԱՐԱՐԱՏՈՒ ՊԱՇՏՈՆԱՏԱՐ ԱՆՁԻ ԸՆՏԱՆԻՔԻ ԱՆԴԱՄԻ ԵԿԱՄՈՒՏՆԵՐ

Գ.1.1. Հաշվետու տարվա եկամուտներ

NN ը/կ	Եկամտի տեսակը	Եկամուտ վճարող կազմակերպության անվանումը կամ ֆիզիկական անձի անունը, ազգանունը և հայրանունը	Եկամուտ վճարողի հասցեն	Հայտարարատուի և եկամուտ վճարողի միջև առկա կապի բնույթը	Ստացված եկամտի գումարը և արժույթը	Բնամթերային ձևով ստացված եկամուտը
1.	Այլ եկամուտներ	Ամերիաբանկ	Պաշտպանված	Պաշտպանված	Դ 106,554.9	
2.	Աշխատանքի վարձատրություն և/կամ դրան հավասարեցված այլ վճարումներ	«ԴԻԶԻԹԵՅՆ»	Պաշտպանված	Պաշտպանված	Դ 10,786,696	
Ընդամենը					**Դ 10,893,250.9**	**Դ 0**

Հավանաբար յուրաքանչյուր մահկանացու-ընթերցող այս տողերը կարդալիս կասի, որ իր կամ իր մերձավորի աշխատավարձը երբեք «հաջորդ տարի» չի ավելացել գրեթե կրկնակի, եթե իհարկե, աշխատակիցը ՔՊ շրջանակից չէ:

Կոռուպցիան հեռու ման չգալու համար՝ դիտենք վարչապետի դստեր հայտարարագիրը:

Եթե Մարիամ Փաշինյանը 2021թվականին «Դիզիթեյն»-ից ստանում էր 6,7 միլիոն դրամ, հաջորդ տարի նրա եկամուտը դարձավ 10.9 միլիոն:

Կամ՝ այստեղ վարչապետի գործոնը՝ ընդդիմադիր Փաշինյանը կասեր՝ կա՝ հավելելով կոռուպցիան «պոզ ու պոչով չլինելու» տեսությունը. հիմա սա ինչ է, եթե ոչ կոռուպցիայի մի ճյուղ...

2018 թվականին, ի թիվս այլ արժեքների, թափանցիկություն քարոզող վարչապետի հայտարարագիրը հարցեր է առաջացնում: Մասնավորապես՝ ումի՞ց, ինչքա՞ն եւ ինչի՞ դիմաց է ՀՀ վարչապետը ստացել եկամուտ, քանզի դրա երրորդ տողը ամբողջությամբ անհասանելի է՝ մնացած «վարչապետների» համար: Հայտարարագրի մեկ այլ՝ ոչ առեւտրային կազմակերպություններում մասնակցության բաժնում ինֆորմացիան փակված է 3 նմանատիպ կառույցների ՀՎՀՀ-ի եւ հասցեների մասով: Դեմոկրատիայի բաստիոնում տեղեկությունները հետզհետե ընդհատակ են անցնում: Իսկ 6 տարի առաջ նա այլ վարչապետ էր ձեւանում, հեծանիվով էր աշխատանքի գնում, ուղիղ եթերում փիփերթով սուպ ուտում:

«Ժողովուրդ» օրաթերթի բացառիկ տեղեկությունների համաձայն՝ ԱԺ նախագահ Ալեն Սիմոնյանի եղբոր կնոջ՝ Անի Գեւորգյանի դեմ հարուցված քրեական գործով քաղաքական որոշումները շարունակվում են կյանքի կոչվել: Մեզ հասած բացառիկ տեղեկությունների համաձայն՝ ՀՀ քննչական կոմիտեն այս օրերին քննարկում է ԱԺ նախագահ Ալեն Սիմոնյանի եղբոր կնոջ՝ Անի Գեւորգյանի դեմ հարուցված քրեական գործը ընդհանրապես կարճելու հարցը: Իսկ ինչ հիմքով են իրավապահ համակարգում քննարկում այդ հարցը. «Ժողովուրդ» օրաթերթը տեղեկացավ, որ քննարկվում է տարբերակ՝ գործուն զղջալու հիմքով առաջիկայում դադարեցնել նրա նկատմամբ քրեական հետապնդումը ու գնալ կարճման: Ինչով կավարտվեն ներքին քննարկումները՝ ցույց կտա ժամանակը: Ի դեպ, տեղեկացնենք, որ քրեական գործը ավարտական փուլում է: Հիշեցնենք, որ 2024 թվականի հունվարի 31-ին ԱԱԾ-ն ու ՔԿ-ն խուզարկություններ էին կատարել ՀՀ էկոնոմիկայի նախարարությունում եւ մի շարք անձանց բնակարաններում (ընդհանուր առմամբ՝ ավելի քան 15 վայրում): Ըստ ՔԿ-ի՝ պարզվել էր, որ ՀՀ էկոնոմիկայի նախարարության պաշտոնատար անձինք «Հանրային ներդրումային ծրագրերի բանկի ստեղծման» մրցույթի շրջանակում օժանդակել են, որ մրցույթում իրենց նախընտրած մասնակիցը հաղթի եւ մրցույթի մյուս մասնակից հիմնադրամի համար ստեղծել են խոչընդոտներ եւ նրան փաստացի հեռացրել մրցույթից: Դրա արդյունքում՝ մրցույթում հաղթող է ճանաչվել մրցակցից շուրջ երեք անգամ ավել՝ ավելի քան 392 մլն դրամ գնային առաջարկ ներկայացրած ընկերությունը: Արդյունքում՝ վարույթի շրջանակում կալանավորվել էր Ազգային ժողովի նախագահ Ալեն Սիմոնյանի եղբոր կինը՝ Անի Գեւորգյանը: Նրան ընդամենը 11 օր կալանքի տակ պահելով՝ կայացվեց քաղաքական որոշումը, եւ դատախազը 2024 թվականի փետրվարի 12-ին, սեփական նախաձեռնությամբ, փոխեց քննչական կոմիտեում քննվող քրեական վարույթով անցնող մեղադրյալներ՝ առեւտրային կազմակերպության աշխատակիցներ Ա.Գ.-ի (Անի Գեւորգյան) եւ Լ.Մ.-ի (Լիլի Մկրյան) նկատմամբ կիրառված խափանման միջոց կալանքը: Նկատենք, որ այս քրեական գործով տնային կալանքի տակ է գտնվում էկոնոմիկայի նախկին նախարար Վահան Քերոբյանը:



«Ժողովուրդ» օրաթերթի տեղեկություններով՝ մայիսի 29-ին Աջափնյակի դատարանի կաշառքի գործով կալանավորված դատավոր Արուսյակ Ալեքսանյանի հարցով Հակակոռուպցիոն դատարան կներկայանա Երեւան քաղաքի ընդհանուր իրավասության դատարանի նախագահ Գագիկ Պողոսյանը: Նա այդ գործով վկա է, եւ այդ կարգավիճակում էլ հրավիրել են հարցաքննության: Նշենք, որ դատավոր Արուսյակ Ալեքսանյանը մեղադրվում է՝ քննչական կոմիտեի տարածքային ստորաբաժանումներից մեկի վարույթում գտնվող քրեական վարույթով մեղադրյալ, իր եղբոր ընկերոջ եւ իր մտերիմ փաստաբան Էրիկ Ալեքսանյանի պաշտպանյալի նկատմամբ որպես խափանման միջոց կիրառված կալանքը գրավով փոխարինելու միջնորդությունն իրեն մակագրելու, ապա այն բավարարելու ուղղությամբ քայլեր ձեռնարկելու համար: Ըստ ԱԱԾ-ի առաջադրած մեղադրանքի՝ դատավոր Արուսյակ Ալեքսանյանը, ի վերջո, մեղադրյալ Սերգեյ Գրիգորյանի կալանքը փոխարինել էր գրավով: Այո, եւս մեկ անգամ հիշեցնենք, որ Սերգեյ Գրիգորյանը բոլորին հայտնի «Ֆազն» է:

ՀԱՋՈՂՈՒԹՅՈՒՆ Է ՍԱՂԹՈՒՄ

ՌՈՒԲԵՆ ՎԱՐԴԱՆՅԱՆԻ ՈՒՂԵՐՁԸ՝ ԲԱՔՎԻՑ

2024 թ. «Ավրորա» մրցանակի շնորհման արարողությանը «Ավրորա» նախաձեռնության համահիմնադիր Ռուբեն Վարդանյանի կինը՝ Վերոնիկա Զոնաբեանդն ընթերցել է Ռուբեն Վարդանյանի ուղերձը Բաքվի բանտից: Ստորև ներկայացվում է Վերոնիկա Զոնաբեանդի խոսքը.

««Ավրորա» 8-րդ մրցանակաբաշխության հարգարժան հյուրեր ու մասնակիցներ, միանում եմ ձեզ Հայաստանից՝ Երեւանից:

Ես կանգնած եմ այստեղ՝ IDeA հիմնադրամի այգում, որը գրեթե 25 տարի առաջ հիմնել ենք Ռուբենն ու ես՝ մեր ընկերների ու գործընկերների հետ միասին: «Ավրորան» ծնվել է այս արմատներից, այն հիմնել են Նուբարը, Վարդանը եւ Ռուբենը:

Մինչեւ Ռուբենի ուղերձն ընթերցելը՝ կցանկանայի իմ խորին եւ անկեղծ երախտագիտությունը հայտնել բոլորիդ, «Ավրորա»-ի համայնքին՝ աջակցության եւ զորակցության համար: Ավելի քան 200 օր Բաքվում բանտարկված լինելով՝ Ռուբենն ու մյուս հայ բանտարկյալները ձեր աջակցությունն են ստացել, դուք նրանց ձեր համերաշխությունն եք հայտնել՝ ձեր համարձակ գործողություններով պահանջելով նրանց անհապաղ եւ անվերապահ ազատ արձակումը: Բոլորովին վերջերս՝ Ռուբենի 20-օրյա հացադուլի ժամանակ, դուք նորից ձեր ձայնը բարձրացրիք՝ միանալով ընտանիքի ձայնին, ինչն անգնահատելի է: Եւս մեկ անգամ շնորհակալություն:

Իսկ հիմա ներկայացնում եմ Ռուբենի . Բաքվի բանտ, 2024 թ.

«2015 թվականին՝ Հայոց ցեղասպանության 100-րդ տարելիցին ընդառաջ, Վարդանը, Նուբարն ու ես, մտորելով, թե ինչպես կարելի է նշել այդ ճակատագրական օրը, որոշեցինք, որ չպետք է միայն հարգանքի տուրք մատուցենք ողբերգության զոհերի հիշատակին: Մենք ցանկանում էինք մեր երախտագիտությունը հայտնել բոլոր նրանց, ովքեր օգնել էին մեր պապերին ու տատերին, փրկել էին կյանքեր:

Մենք ցանկանում էինք փոխել հայկական նարատիվը՝ զոհի կերպարից ու անցյալի հիշողությունից դեպի նոր՝ ապագային հույսով նայելու հեռանկարի:

Մենք սկսեցինք այս նախաձեռնությունը՝ մեր ժողովրդի անունից երախտագիտություն հայտնելու համար մերօրյա հերոսներին, մեծարելու նրանց եւ օգնելու, որպեսզի շարունակեն իրենց դժվարին առաքելությունն ու բարի գործերը: Մենք երազում էինք, որ Երեւանը դառնա աշխարհի մարդասիրական մայրաքաղաքը, եւ որ մենք միավորվեինք՝ ցեղասպանության հետեւանքով աշխարհով մեկ սփռված հայկական սփյուռքի հետ դառնալով միասնական ազգ:

«Ավրորա»-ի հետ մենք աշխարհի ուշադրությունը հրավիրում ենք մերօրյա իրական հերոսների վրա, ովքեր վտանգում են իրենց բարեկեցությունն ու կյանքը, ովքեր հավատ ու ճանապարհ են գտնում ուրիշներին օգնելու համար:

«Ավրորա»-ի շնորհիվ ես հանդիպեցի մարդկանց, որոնք ինձ սովորեցրին ամենակարեւոր դասը՝ հավատարիմ մնալ մարդկային արժեքներին եւ սեփական սկզբունքներին՝ անկախ իրավիճակից, եւ անցնել քո ճանապարհը:

Իմ՝ Արցախ տեղափոխվելու որոշումը ես կայացրեցի «Ավրորա»-ի հերոսների շնորհիվ. ես որոշեցի լինել այն մարդկանց կողքին, որոնք օգնության կարիք ունեին ու փորձում էի հնարավոր ամեն ինչ անել՝ նրանց օգնելու համար: Հիմա լինելով այստեղ՝ արտաքին աշխարհից գրեթե ութ ամիս ամբողջովին մեկուսացված, ես խորհելու շատ ժամանակ ունեմ:

Ես ամենեւին չեմ զղջում այդ ճանապարհն ընտրելու համար: Ես խորապես երախտապարտ եմ ձեզ՝ ինձ ոգեշնչելու ու ճիշտ գործի մղելու համար: Հիմա ես շատ ավելի լավ եմ հասկանում, թե ինչն էր առաջ մղում Մարգարիտ Բարանկիցեին, Թոմ Քաթինային եւ «Ավրորա»-ի մյուս դափնեկիրներին, եւ ինչու են նրանք այդպես հավատում մեկ մարդու ուժին. մարդու, որը կարող է փոխել աշխարհը դեպի լավը: Մենք պարզապես չունենք այլընտրանք՝ բացի փորձելուց:

Ցավոք, աշխարհն ավելի բարի չի դարձել ձեր լավ գործերի արդյունքում, բայց սա նշանակում է, որ այն, ինչ դուք անում եք, հիմա ավելի կարեւոր է, քան երբեւէ:

Ուրիշներին օգնելու ձեր հանձնառությունն ինձ այստեղ ուժ է տալիս: Ես հիմա, ավելի քան երբեւէ, համոզված եմ, որ արժեքներն ու սկզբունքներն ավելի կարեւոր են, քան նույնիսկ կյանքը:

Ես մաղթում եմ ձեզ հաջողություններ ձեր առաքելության մեջ եւ իմ ջերմ շնորհավորանքներն եմ հղում այս տարվա դափնեկրին: Վստահ եմ, որ միասին կարող ենք շատ բան անել՝ աշխարհը բոլորի համար ավելի լավ եւ ավելի բարի վայր դարձնելու համար: Ինչպես Մարգարիտն է հաճախ ասում. «Սերը միշտ հաղթում է»: Եվ թող սերն ու արժեքները հաղթեն: Եվ թող մենք բոլորս տանք ավելին, քան երբեւէ կարող ենք հուսալ, որ կստանանք: Մեզնից յուրաքանչյուրն իրականում կարող է շատ բան փոխել»»:

ՔԱՎՈՐԻ ԿԱՐԾԻՔԸ

«ԼԱՓԱՄԱՆԻՑ ՕԳՏՎՈՂ ՄԱՐԴԻԿ ԿԱՆ»

Բազմաթիվ մարդիկ հավաքվելով Հանրապետության հրապարակում պահանջում են ՀՀ վարչապետ Նիկոլ Փաշինյանի հրաժարականը:

Նշենք, որ այսօր առավոտվանից սկսվել էին անհնազանդության ակցիաներ իրականացվել, կազմակերպվել էին երթեր, որոնց ժամանակ էլ երթի մասնակիցները հորդորում էին քաղաքացիներին միանալ, անմասն ու անտարբեր չլինեն:

Չնայած նրան, որ Հանրապետության հրապարակում հավաքված մարդկանց թիվը հասնում է 2018 թվականին նույն վայրում հավաքված մարդկանց քանակին, ովքեր պահանջում էին նախագահ Սերժ Սարգսյանի հրաժարականը, վարչապետ Փաշինյանը չի արձագանքում հրաժարականի պահանջին, եւ հիշեցնենք, որ ՀՀ վարչապետ Փաշինյանը ասել էր, որ ինչպես եկել է, այնպես էլ հեռանալու է:

«Ժողովուրդ» օրաթերթը կապ է հաստատել ՔՊ-ական պատգամավոր Վահե Ղալումյանի հետ, ով, ի դեպ, վարչապետ Փաշինյանի ընտանիքի քավորն է, պարզելու համար՝ արդյո՞ք ճիշտ է Փաշինյանի հրաժարականը պահանջելը եւ ի՞նչ է կարծում ՔՊ-ական պատգամավոր Հակոբ Ասլանյանի հայտարարության մասին:

Վահե Ղալումյանը մեզ հետ զրույցում ասաց, որ փողոց դուրս եկած մարդիկ ճիշտ չեն անում, որ պահանջում են Նիկոլ Փաշինյանի հրաժարականը:

«Ճիշտ չեն անում, որովհետեւ վարչապետ Փաշինյանը լավ վարչապետ ա: Լափամանից զրկված մարդիկ կան, բայց ընդհանուր չեմ դիտարկում: Կան մարդիկ, ովքեր համաձայն չեն ոչ մի հարցի հետ, այդ մարդկանց պետք է հասկանալ ինչ են ասում, ինչ են ուզում»,- ասաց Վահե Ղալումյանը:

Հիշեցնենք, որ Հակոբ Ասլանյանը ArmLur.am-ի հետ զրույցում ասել է.

«Այսօր փողոցում հավաքվել է ժողովրդի փոքրիկ մասնիկը, որոնք զրկվել են լափամանից, եղել են աբիժնիկ, մարդիկ են, որոնք պաշտոն են ուզում, որպեսզի երկիրը էլի տանեն կործանման: Ժողովրդի էն մասն ա, որոնք ուղղորդվում են օտար ուժերի կողմից»:

ԿՈՆՍԵՐՎԱՏՈՐԻԱՅԻ ՄԵԿՆԱԲԱՆՈՒԹՅՈՒՆԸ՝ ԴԱՍԱԴՈՒԼԻՆ

Երեկ՝ մայիսի 10-ին, Բագրատ սրբազանի գլխավորած երթը շրջել է համալսարաններով եւ կոչ արել ուսանողներին միանան շարժմանը: Շատերը հենց տեղում դուրս եկան դասից եւ միացան շարժմանը, իսկ մյուսներին հորդորեց ժամը 18:00-ին լինեն Հանրապետության հրապարակում:

«Ժողովուրդ» օրաթերթը կապ հաստատեց Երեւանի Կոմիտասի անվան պետական Կոնսերվատորիայի ռեկտոր Սոնա Հոնհաննիսյանի հետ, հասկանալու համար, ի՞նչ են պատրաստվում անել ուսանողները. «Կոնսերվատորիայի պրոֆեսորադասախոսական կազմն ու ուսանողությունը, լինելով ՀՀ քաղաքացիներ, իրավունք ունեն մասնակցելու կամ չմասնակցելու ժամանակի քաղաքական այս կամ այն իրադարձություններին, ունենալ անձնական դիրքորոշումներ բացառապես ԲՈՒՀ-ի սահմաններից դուրս:

ԲՈՒՀ-ի ներսում քաղաքական ագիտացիաները, ուսանողների քաղաքական դիրքորոշումների հանդեպ հոգեբանական եւ վարչական ճնշումները, ինչպես նաեւ ԲՈՒՀ-ի անունից ապատեղեկատվություն տարածելն ու հայտարարություններ հրապարակելն անընդունելի են»:

ԷՄՄԱ ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ

ԹԻՐԱԽԱՎՈՐԵԼ Է ՔԱՂԱՔԱՑԻՆԵՐԻՆ

ԱԺ մարդու իրավունքների պաշտպանության եւ հանրային հարցերի մշտական հանձնաժողովի՝ ապօրինաբար լիազորությունները դադարեցված նախագահ, անկուսակցական պատգամավոր Թագուհի Թովմասյանը սոցցանցի իր էջում գրում է.

«ՀՀ սուվերեն տարածքից կատարվող միակողմանի զիջումները մերժելու, իշխանության կողմից խաբված չլինելու համար փողոց դուրս եկած տավուշեցիները, նրանց միացած տասնյակ հազարավոր ՀՀ քաղաքացիներ Երեւանում, որոնք պահանջում են Նիկոլ Փաշինյանի հրաժարականը, թիրախավորվում են իշխող «Քաղաքացիական պայմանագիր» կուսակցության ներկայացուցիչների կողմից:

ՀՀ Ազգային ժողովի պատգամավոր Հակոբ Ասլանյանն ArmLur.am կայքին տված հարցազրույցում ասել է. «Այսօր փողոցում հավաքվել է ժողովրդի փոքրիկ մասնիկը, որոնք զրկվել են լափամանից, եղել են աբիժնիկ, մարդիկ են, որոնք պաշտոն են ուզում, որպեսզի երկիրը էլի տանեն կործանման...»:

Սա ակնհայտ վիրավորանք է, թիրախավորում, ատելության խոսք, որը միանշանակ դատապարտելի է:

Այս առիթով գրություններ եմ ուղարկել ինչպես ՀՀ օմբուդսմենին, այնպես էլ ՀՀ-ում հավատարմագրված դեսպաններին ու միջազգային կազմակերպություններին: Նրանց ուշադրությունն եմ հրավիրել անընդունելի այս փաստի վրա եւ խնդրել՝ նպաստել ՀՀ քաղաքացիների իրավունքների վերականգնմանը, որը խախտվում է իշխող մեծամասնության ներկայացուցիչների կողմից»:

ԲԱԳՐԱՏ ՍՐԲԱԶԱՆԻ ԽՈՍՔԸ

Երեկ Հանրապետության հրապարակում Հայ Առաքելական Եկեղեցու Տավուշի թեմի առաջնորդ Բագրատ արքեպիսկոպոս Գալստանյանն անդրադարձել է իշխանական լրատվամիջոցներից մեկում իր մասին գրած նյութին:

«Այս ողորմելի օրգանը, ինքնություն չունեցող՝ իրենց տերերով հանդերձ, ուղիղ ասում եմ՝ դուք մարդասպաններ եք, դուք մարդ չեք: Ինձ վերագրել են, որ ես ուսանողներին ասել եմ «ողորմելի խամաճիկներ»: Ուսանողներ, ես ձեզ այդպիսի բան եմ ասել»: Սրբազանի խոսքին ի պատասխան ուսանողները վանկարկել են. «Ոչ, ոչ»:

Բագրատ սրբազանը շարունակել է. «Բա էս տականքները, կներեք այս բառերն օգտագործելու համար, այս մարդասպաններն ինչո՞ւ են այսպես ասում: Ես ասել եմ՝ ուսումնական հաստատություններին՝ այս դռները փակելով, ուսանողներին ահաբեկելով՝ դուք ոչ թե մարդ եք պատրաստում, այլ ողորմելի խամաճիկներ եք ուզում պատրաստել: Սա եմ ասել: Ամոթ էլ չունեն: Սրանց համար երեւի նոր մակարդակով, նոր էտապով դժոխք է ստեղծվելու ... ծառայող են սրան, նրան, փող կտան՝ կգրեն, փող չեն տա՝ չտվողների դեմ կգրեն»:

ԱԼԻԵՎԻ ԵՐԿԱԿԻ ԴԵՄՔԸ

«Գեղարդ» հիմնադրամը, անդրադառնալով ԼՂ-ում Հայրենական պատերազմի հերոսների հիշատակին նվիրված հուշարձանների ոչնչացմանը, տեքստ է հրապարակել:

«Ադրբեջանի նախագահը կնոջ հետ այցելել է Խորհրդային Միության կրկնակի հերոս Հազի Ասլանովի գերեզմանին»: Հաղորդագրության մեջ նշվում է. «ադրբեջանցի ժողովուրդը մեծ ներդրում է ունեցել ֆաշիզմի դեմ պատմական հաղթանակում ... ռազմաճակատ է ճանապարհել իր 600 հազար որդիների ու դուստրերի, որոնցից 300 հազարը հերոսաբար զոհվել են մարտերում»:

Բնականաբար, Ադրբեջանն այս թվերի մեջ ներառում է նաեւ տասնյակ հազարավոր հայերին, որոնք զորակոչվել են Լեռնային Ղարաբաղի Ինքնավար Մարզից: Ի դեպ, Խորհրդային Ադրբեջանից ԽՍՀՄ կրկնակի հերոսի կոչման արժանացած 8 հոգուց 2-ը Հովհաննես Բաղրամյանն ու Նելսոն Ստեփանյանն են:

Զավեշտ է, բայց Արցախում համակարգված ոչնչացնում է այդ նույն հաղթանակի համար զոհված մարտիկներին նվիրված տասնյակ հուշարձաններ: Մասնավորապես՝ Շուշիում ոչնչացվել է Նելսոն Ստեփանյանի, Հադրութի շրջանի Մեծ Թաղեր գյուղում մարշալ Արմենակ Խանփերյանցի, Ստեփանակերտում ծովակալ Հովհաննես Իսակովի հուշարձանները: Ինքնին, այս գործողությունները ֆաշիզմի եւ վանդալիզմի ակնառու դրսեւորումներ են»,- ընդգծված է «Գեղարդ» հիմնադրամի հայտարարության տեքստում:

ԻՄՊԻՉՄԵՆՏ

Ի՞ՆՉ Է ԱՅՆ ԵՎ Ի՞ՆՉ Է ԻՐԵՆԻՑ ԵՆԹԱԴՐՈՒՄ

Մայիսի 4-ին Կիրանցից մեկնարկեց «Տավուշը հանուն հայրենիքի» շարժման քայլերթը դեպի Երեւան:



Մայիսի 9-ին քայլերթի մասնակիցներին Հանրապետության Հրապարակում դիմավորեցին աջակիցները: Բազմամարդ հանրահավաքի եւ հաջորդող օրվա բողոքի ակցիաների ընթացքում քաղաքացիներ են ձերբակալվել, իսկ շարժման ղեկավարությունը հայտարարել է իմպիչմենտի մասին:

Ի՞նչ է այն, եւ ի՞նչ է իրենից ենթադրում:

Իմպիչմենտը վարչապետին անվստահություն հայտնելու գործընթաց է, որը հաջողելու դեպքում համարվում է, որ վարչապետը հրաժարական է ներկայացրել եւ նոր վարչապետն ընտրվել է:

Իմպիչմենտն ավարտին հասցնելու համար պատգամավորների 1/3-ը՝ 36 պատգամավոր, պետք է ներկայացնի վարչապետին անվստահություն հայտնելու մասին Ազգային ժողովի որոշման նախագիծ, որի մեջ նշվում է նոր վարչապետի թեկնածուն: Պահանջվում է խորհրդարանականի աջակցությունը, եւ, համապատասխանաբար, առանց արմատական իշխանության ձայների, իրագործման հեռանկար չկա:

Հարկ է ընդգծել, որ Հայաստանի վարչապետ Նիկոլ Փաշինյանին իմպիչմենտ հայտարարելու համար անհրաժեշտ կլինի նաեւ «Քաղաքացիական պայմանագիր» խմբակցության պատգամավորներից անվստահություն հայտնելու քայլ, քանի որ ընդդիմադիր թեւի ռեսուրսները չեն բավականացնում:

ՀՀ Ազգային ժողովի մեծամասնություն ՔՊ-ն ունի 71 պատգամավոր, «Հայաստան» խմբակցությունը՝ 29, իսկ «Պատիվ ունեմ» խմբակցությունը՝ 6: Իմպիչմենտ ներկայացնելու համար անհրաժեշտ կլինի հրավիրել արտահերթ խորհրդարանական նիստ, որը գումարելու համար պետք է ներկայացվի իմպիչմենտի նախագիծը, որում անվստահություն կհայտնեն ներկա վարչապետի նկատմամբ եւ կառաջարկեն վարչապետի նոր թեկնածուի անունը: Այդ որոշման նախագիծը ներկայացնելուց հետո ԱԺ նախագահը նշանակում է արտահերթ նիստ եւ նիստի գումարման համար անհրաժեշտ է 54 պատգամավորի ներկայություն՝ խորհրդարանի կեսից ավելին:

Ազգային ժողովի առաջիկա հերթական նիստերում վարչապետին անվստահություն հայտնելուց 48-50 ժամ հետո հարցը քննարկվում է, իսկ այդ ժամկետներում հերթական նիստեր չանցկացվելու դեպքում՝ իրավունքի ուժով անհապաղ գումարվող Ազգային ժողովի հատուկ նիստում:

Իմպիչմենտ ներկայացնելու համար անհրաժեշտ կլինի ՔՊ-ը 1 պատգամավորի անվստահությունը, սակայն այն արշավը, որը արդեն 2 օր է սկսել են ՔՊ-ականները, դժվար թե այդ մեկը աջակցի իմպիչմենտի գործընթացին:

Ստացվում է, որ իմպիչմենտը խորհրդարան մտցնելու համար անհրաժեշտ է 36 պատգամավորի ստորագրություն, իսկ քվորում ապահովվելու համար՝ 54, ստացվում է, որ ՔՊ-ից Նիկոլ Փաշինյանին անվստահություն պետք է հայտնի եւս 17 պատգամավոր:

Երթի մասնակիցներին լափամանից օգտվող համարող իշխանությունների արշավը՝ «Մեր պատասխանը Բագրատին, ՀՀ ընտրված վարչապետը» վերտառությամբ, խոստումնալից չէ եւ իշխանական պատգամավորներից նման քայլ դեռ ոչ ոք չի սպասում:

ԷՄՄԱ ՄԻՔԱՅԵԼՅԱՆ

ՕՐՎԱ ԽՃԱՆԿԱՐ

ՎԱՐՉԱՊԵՏԻ ԱՆՈՒՆՆԵՐ ՔՆՆԱՐԿՎՈՒՄ ԵՆ

«Մեր գործը մինչեւ հիմա չի եղել քաղաքական գործընթաց: Հիմա, մեր կարծիքով, քաղաքական գործիչների խորհրդակցության արյդունքում, արդեն ծրագրվի: Երեկ փորձեցինք խորհրդարանական պատգամավորների հետ հանդիպել, խոսել, թե ինչ ձեւերով կգնա գործընթացը. նրանք պատրաստ են այդ գործընթացը այս փուլում շարունակելու եւ օրինակ ճանապարհով հասցնելու ավարտին: Այդ ժամանակ պահանջվելու է նաեւ վարչապետի թեկնածու եւ այդ ժամանակ էլ երեւի կհնչի [անուն]», - Հանրապետության հրապարակում ասաց Բագրատ Սրբազանը:

Հարցին անուններ քննարկվո՞ւմ են, Բագրատ Սրբազանն ասաց, որ այո, անուններ քննարկվում են. «Տարբեր անուններ են քննարկվում, ձեր սիրած ու չսիրած անուններ, բայց ի վերջո համաձայնություն կգոյանա, թե ով կյլինի, ում անձի շուրջ կլինի, սա արդեն երկրորդ փուլ է», - ասաց նա:

ԱԶԱՏ Է ԱՐՁԱԿԵԼ MCS Aries–Ի ԱՆՁՆԱԿԱԶՄԻՆ

Իրանը ազատ է արձակել առեւանգված MCS Aries-ի անձնակազմի յոթ անդամներին, այդ թվում՝ հինգ հնդկացիների:

Ապրիլի կեսերին իրանական լրատվամիջոցները հայտնել էին, որ Իսլամական հեղափոխության պահապանների կորպուսի ստորաբաժանումները Հորմուզի նեղուցի ջրերում գրավել են Պորտուգալիայի դրոշով բեռնատար նավը: ԻՌՆԱ լրատվական գործակալության փոխանցմամբ՝ MCS Aries անունով բեռնարկղային նավը որսացել է Իսլամական հեղափոխության պահապանների կորպուսի ռազմածովային ուժերի հատուկ ջոկատայինների կողմից՝ գործողություն իրականացնելով եւ նավի տախտակամածից անձնակազմի տարհանմամբ: Սպիտակ տան Ազգային անվտանգության խորհրդի խոսնակ Ադրիեն Ուոթսոնը հայտարարել է, որ նավի անձնակազմը բաղկացած է Հնդկաստանի, Ֆիլիպինների, Պակիստանի, Ռուսաստանի եւ Էստոնիայի քաղաքացիներից:

Ինչպես ավելի ուշ հայտարարել է Իրանի արտգործնախարարության խոսնակ Նասեր Քանանին, իսրայելական MCS Aries բեռնանավը կալանավորվել է ծովային օրենսդրության խախտման պատճառով:

«Հնդկական MSC Aries-ի հինգ նավաստիներ ազատ են արձակվել եւ մեկնել Իրանից այսօր երեկոյան: Մենք երախտապարտ ենք Իրանի իշխանություններին Բանդար Աբասում Հնդկաստանի դեսպանատան եւ հյուպատոսության հետ սերտ համակարգման համար», - ասվում է Թեհրանում Հնդկաստանի դեսպանությունից:

Իր հերթին Պորտուգալիայի իշխանությունները հայտարարել են եւս երկու նավաստիների՝ Ֆիլիպինների եւ Էստոնիայի քաղաքացիների ազատ արձակման մասին:

Իրանի արտաքին գործերի նախարար Հոսեյն Ամիր Աբդոլլահյանը մայիսի 2-ին հայտարարել է, որ Իրանը մարդասիրական նկատառումներով ազատ է արձակել նավի ողջ անձնակազմին:

«ՏԱՎՈՒԾԸ ՀԱՆՈՒՆ ՀԱՅՐԵՆԻՔԻ»

ՄԱՄՆԱԿԻՑՆԵՐԻՆ ՁԵՐԲԱԿԱԼՈՒՄ ԵՆ

Ժողովուրդ օրաթերթը արձանագրում է, որ «Տավուշը հանուն հայրենիքի» շարժման մասնակիցներին մեկը մյուսի հետեւից ձերբակալում են:

Ո՞վքեր են նրանք:

Քննչական կոմիտեն երեկ հայտնել է.

«Իրականացվող բողոքի ակցիաների շրջանակներում մայիսի 10-ին՝ ժամը 11:10-ի սահմաններում, ՀՀ Վայոց Ձորի մարզի Մալիշկա բնակավայրի տարածքում մի խումբ անձինք փակել են Մեղրի-Երեւան միջպետական ճանապարհը:

Հասարակական կարգի պահպանություն իրականացնող ոստիկանության ծառայողների կողմից, իրենց ծառայողական պարտականությունների կատարման շրջանակներում, ակցիայի մասնակիցներին ներկայացվել է ճանապարհը բացելու եւ երթեւեկությունը վերականգնելու օրինական պահանջ:

Սակայն ակցիայի մասնակիցներից մեկը, պաշտոնատար անձի օրինական գործունեությանը միջամտելու նպատակով, բռնություն է գործադրել ոստիկանության ծառայողներից մեկի նկատմամբ՝ բռունցքով հարվածելով վերջինիս գլխի հատվածին:

Դեպքի առթիվ ՀՀ քրեական օրենսգրքի 452-րդ հոդվածի 3-րդ մասի հատկանիշներով նախաձեռնվել է քրեական վարույթ:

Հանցավոր արարքն առերեւույթ կատարելու անմիջականորեն ծագած հիմնավոր կասկածի հիմքով ակցիայի նշված մասնակիցը ձերբակալվել է:

Իրականացվում է նախաքննություն՝ դեպքի հանգամանքները պարզելու եւ նշված անձի գործողություններին իրավական գնահատական տալու նպատակով:

«Տավուշը հանուն հայրենիքի» նախաձեռնության եւ վերջինիս աջակիցների կողմից Երեւան քաղաքում անցկացվող բողոքի ակցիաների, մասնավորապես երթի ընթացքում մայիսի 10-ին՝ ժամը 12?00-ի սահմաններում, Երեւան քաղաքի Նալբանդյան եւ Իսահակյան փողոցների խաչմերուկից սառը զենք կրելու կասկածանքով Ոստիկանության կենտրոնական բաժին են տեղափոխվել ակցիայի երկու մասնակից:

Վերջիններիս անձնական խուզարկությամբ նրանց մոտ հայտնաբերվել է սառը զենքի նմանվող առարկա՝ մեկական ծալովի դանակ:

Պարզվել է, որ վերջիններս Երեւան քաղաքի 42-ամյա եւ 47-ամյա բնակիչներ են, որոնցից առաջինը նախկինում երեք անգամ դատապարտված է եղել՝ գույքի հափշտակության համար (որոնցից երկուսը՝ ավազակությամբ), իսկ երկրորդը՝ ուրիշի առողջությանը դիտավորությամբ ծանր վնաս պատճառելու համար:

Դեպքի առթիվ ՀՀ քրեական օրենսգրքի 334-րդ հոդվածի 1-ին մասի հատկանիշներով նախաձեռնվել է քրեական վարույթ:

Նշված երկու անձինք, հանցանք կատարելու անմիջականորեն ծագած հիմնավոր կասկածի հիմքով, ձերբակալվել են:

Նախաքննությամբ պարզվում են հանգամանքները:

Ծանուցում. Հանցանքի համար մեղադրվողը համարվում է անմեղ, քանի դեռ նրա մեղավորությունն ապացուցված չէ ՀՀ քրեական դատավարության օրենսգրքով սահմանված կարգով՝ դատարանի՝ օրինական ուժի մեջ մտած դատավճռով»:

Ի՞նչ է սպասվում վերանշյալ անձանց. կհետեւենք իրադարձությունների զարգացմանը:

ՔՆԱՐ ՄԱՆՈՒԿՅԱՆ

ՔՐԵԱԿԱՆ ՔՐՈՆԻԿՈՆ

Ո՞Վ ԷՐ «ԿԱՄԱԶ»-Ի ՎԱՐՈՐԴԸ

«Ժողովուրդ» օրաթերթի տեղեկությունների համաձայն՝երեկ հրապարակում քաղաքացիների վրա ներխուժած բեռնատարի վարորդը Արարատի մարզի Ջրահովիտ գյուղի բնակիչ Կարեն Ղազարյանն է: Մեզ հասած տեղեկությունների համաձայն՝նա իրավապահներին պատմել է, որ ինքը «Կամազ» -ով եկել էր միանալու ցուցարարներին:

Հիշեցնենք, որ «Տավուշը հանուն հայրենիքի» նախաձեռնության կողմից անցկացվող հանրահավաքի ընթացքում անհայտ անձը «Կամազ» մակնիշի բեռնատար ավտոմեքենան վարել է դեպի հանրահավաքի մասնակիցները: Վարորդը դեպքի վայրում ձերբակալվել է ոստիկանության ծառայողների կողմից՝ առերեւույթ հանցավոր արարք կատարելու կասկածանքով:

Դեպքի առթիվ ՀՀ քրեական օրենսգրքի 297-րդ հոդվածի (խուլիգանություն) 1-ին մասի հատկանիշներով նախաձեռնվել է քրեական վարույթ:

ԳՈՐԾ Է ՀԱՐՈՒՑՎԵԼ

Հակակոռուպցիոն կոմիտեն քրեական գործ է հարուցել «Հայաստան» խմբակցության պատգամավոր Արթուր Խաչատրյանի բռնության ենթարկելու դեպքով:

Տեղեկացնում ենք, որ գլխավոր դատախազությունը հանցագործության մասին հաղորդում էր ներկայացրել Արթուր Խաչատրյանը եւ հայտնել:

«Ինչպես հավանաբար տեղյակ եք, ուրբաթ օրն՝ ապրիլի 27-ին, Երեւան-Սեւան մայրուղու Հրազդանի հատվածից մի խումբ ոստիկաններ, առանց որեւէ օրինական պահանջ ներկայացնելու, թեժացնելով եւ սադրելով լարված իրավիճակը, իմ նկատմամբ բռնություն են կիրառել, ապօրինաբար զրկել են ազատությունից եւ ոստիկանական մեքենայով՝ չորս ոստիկանի ուղեկցությամբ տեղափոխել են Կոտայքի մարզի Հրազդանի ոստիկանական բաժանմունք:

Հրաման տվողն ու քաշքշուկ հրահրողը ՀՀ ոստիկանության Կոտայքի մարզային վարչության պետ Ռուբեն Դավթյանն էր:

Վստահ եմ, որ հատկապես Ռ. Դավթյանը քաջատեղյակ էր, որ ես ԱԺ պատգամավոր եմ: Ի դեպ, Դավթյանը քաղաքացիական հագուստով էր եւ չէր ներկայացել: Ճանապարհին ես իմ զարմանքն ու ընդվզումն էի արտահայտում, հատկապես պայմանավորված այն հանգամանքով, որ իրենք իրավունք չունեն ԱԺ պատգամավորին ազատությունից զրկելու եւ բերման ենթարկելու, սակայն ինձ չէին արձագանքում: Արդեն բաժանմունքում ինձ տեղեկացրեցին, որ ես բերման չեմ ենթարկվել: Խոսքերն ավելորդ են:

Այն ինչ տեղի ունեցավ ուրբաթ օրը, ոստիկանապետության ամենացցուն դրսեւորումն էր: Փաստորեն, Հայաստանում ոստիկանն իրեն օրենքից վեր է դասում, իրեն իրավունք է տալիս խախտել երկրի Սահմանադրությունը: Հույս ունեմ, որ հանցագործությունն անպատիժ չի մնա: Այլապես, այսօրվա իշխանություններին էլ ավելի բարդ կլինի հերքել, որ ոստիկանական ապօրինությունները կատարվում են իրենց անմիջական հրամանով»,- գրել էր նա:

Գործը ուղարկվել էր Հակակոռուպցիոն կոմիտե եւ արդյունքում նախաձեռնվել է քրեական վարույթ:

Ք. ՄԱՆՈՒԿՅԱՆ

ԼՈՒՐԵՐ

ԲԵՐՄԱՆ Է ԵՆԹԱՐԿՎԵԼ ՄԻԿԱ ԲԱԴԱԼՅԱՆԸ

Երեւանում ոստիկանները բերման են ենթարկել բլոգեր Միկա Բադալյանին:

Այս մասին վերջինս հայտնել է «Տելեգրամ»-ի իր ալիքում:

Ավելի վաղ հայտնել էինք, որ բլոգեր Միկա Բադալյանի եւ լրագրող Ժիրայր Ոսկանյանի միջեւ տեղի էր ունեցել միջադեպ:

Լրագրողի նկատմամբ Երեւանի ակումբներից մեկում հանցավոր ոտնձգության դեպքի կապակցությամբ նախաձեռնվել է քրեական վարույթ:

ՀՀ-Ն ԲԱՎԱՐԱՐԵԼ Է ԳԵՐՄԱՆԻԱՅԻ ՄԻՋՆՈՐԴՈՒԹՅՈՒՆԸ

Հայաստանի Հանրապետության գլխավոր դատախազ Աննա Վարդապետյանը բավարարել է Գերմանիայի Դաշնային Հանրապետության իրավասու մարմնի միջնորդությունը. հանցավոր կազմակերպության կողմից առանձնապես խոշոր չափերի խարդախություն կատարելու մեջ մեղադրվող Մ.Բ.-ն հանձնվել է ԳԴՀ իրավասու մարմիններին: Հանձնման մասին միջնորդության քննարկման շրջանակներում գերմանական կողմի հետ իրականացվել է համագործակցություն նաեւ Եվրոպական միության քրեական արդարադատության գործակալության (Եվրաջասթ) միջոցով:

ՉԻ ՄԵԿՆԱԲԱՆԵԼ ԱՏԵԼՈՒԹՅԱՆ ԽՈՍՔԸ

«Ժողովուրդ» օրաթերթը դիմեց Մարդու իրավունքների պաշտպան Անահիտ Մանասյանին,որ նա մեկնաբանի ՔՊ պատգամավորի հայտարարությունը, ի պատասխան վերջինիս խոսնակը փոխանցեց Պաշտպանի խոսքը.«Ի պատասխան Ձեր հարցի՝ տեղեկացնում ենք, որ Մարդու իրավունքների պաշտպանը չի մեկնաբանում առանձին քաղաքական գործիչների քաղաքական խոսքը: Միեւնույն ժամանակ, նկատի ունենալով իրավիճակը՝ Պաշտպանը բոլոր հանրային ու քաղաքական գործիչներին կոչ է արել եւ անում օգտագործել առավել հանդուրժող խոսույթ, իսկ զանգվածային լրատվության միջոցներին հորդորում է չտարածել անհանդուրժողականություն քարոզող, վիրավորանք պարունակող եւ ատելության խոսք:

Մարդու իրավունքների պաշտպանը հատուկ ընդգծում է, որ մեր հասարակությունում առկա քաղաքական եւ հանրային բանավեճի մշակույթն ունի վերափոխման անհրաժեշտություն, ինչն առաջնահերթ խնդիր է հանրային հանդուրժողականության, համերաշխության եւ իրավունքի գերակայության երաշխավորման ճանապարհին»:

Հիշեցնենք, որ Հակոբ Ասլանյանը ArmLur.am-ի հետ զրույցում ասել է.

«Այսօր փողոցում հավաքվել է ժողովրդի փոքրիկ մասնիկը, որոնք զրկվել են լափամանից, եղել են աբիժնիկ, մարդիկ են, որոնք պաշտոն են ուզում, որպեսզի երկիրը էլի տանեն կործանման: Ժողովրդի էն մասն ա, որոնք ուղղորդվում են օտար ուժերի կողմից»:

● *Ըստ ոստիկանության տվյալների՝ մայիսի 8-ից 10-ը ՀՀ ՆԳՆ ոստիկանության ստորաբաժանումների կողմից բացահայտվել է հանցագործության 148 դեպք, որից 14-ը՝ նախկինում կատարված:*

ՀԱՍԱՐԱԿՈՒԹՅՈՒՆ

ՄԱՐՔ

ՍԱՀՄԱՆԱԶԱՏՈՒՄԸ ՍԱՌԵՑՎԱԾ Է

Կիրանցի վարչական ղեկավար Կամո Շահինյանը հայտնեց, որ սահմանազատման գործընթացը Կիրանցում ներկայումս սառեցված է: Նա ասաց, որ բանակցությունների արդյունքում գյուղի բարձունքում գտնվող, շատ կարեւոր խաչի Յալ տարածքում հաջողվել է 25 մետրով ետ տանել սահմանը, ինչի համար ինքը գոհունակություն է հայտնել: Հարցրինք, թե բանակցություններն ինքը ո՞ւմ հետ է տարել: Նա պատասխանեց՝ քարտեզագրողների: Կ. Շահինյանը դժգոհեց, որ ինքը երկու անգամ « ասուլիս է տվել», բազում մտահոգություններ հնչեցրել, սակայն կենտրոնացել են միայն այն խոսքերի վրա, որ ինքը գոհունակության է հայտնել նշված հատվածում սահմանը 25 մետր հետ տանելու համար:

«Գո՞հ եմ, թե չէ, պար եմ եմ գալիս»,- ասաց Կ. Շահինյանը: Նա ասաց, որ իրենց մտահոգությունները մնում են, քանի որ սահմանազատման հետեւանքով գյուղից խանութներ, այլ շինություններ, 19-րդ դարի եկեղեցու բակը, այգիներ, վարելահողեր կանցնեն Ադրբեջանին, միջպետական ավտոճանապարհի Կիրանցի կամրջով այլեւս երթեւեկել չի լինի: Այդ տարածքների, շինությունների համար Կիրանցի բնակիչները կադաստրից ստացել են սեփականության վկայականներ: Կիրանցի վարչական ղեկավարն ասաց, որ իրենց համար ձեռնտու կլինի, որ Կիրանցին պատկանող, գյուղի ծայրին գտնվող 60 հեկտար հողերը, որտեղ նաեւ ադրբեջանական գերեզմանատուն կա, փոխանակվի իրենց համար կենսական տարածքների հետ: Կ. Շահինյանը հերքեց,որ բողոքի հավաքներին մասնակցելու համար 4 կիրանցիների ազատել են աշխատանքից:

ՉԳԻՏԵ՞Ն ԱՆՀԵՏ ԿՈՐԱԾՆԵՐԻ, ԳԵՐԻՆԵՐԻ ԹԻՎԸ

Տավուշի մարզպետ Հայկ Ղալումյանին հարցում ենք ուղարկել, նրան հարցնելով՝ 2020 թվականին Արցախում տեղի ունեցած պատերազմի ավարտից անցել է մոտ երեքուկես տարի, դա մեծ ժամանակ է պատերազմում զոհվածների ու անհետ կորածների թիվը ճշտելու համար: Այդ պատերազմում Տավուշի մարզի քանի՞ բնակիչ է զոհվել, քանիսը՝ անհետ կորել, քանի՞սն է հիմա Ադրբեջանում գերի: Մարզպետարանից պատասխանել են. «Հարցի վերաբերյալ առաջարկում ենք դիմել համապատասխան պետական լիազոր մարմիններին»: Մարզպետարանը, ըստ «Տեղեկատվության ազատության մասին» ՀՀ օրենքի պահանջների՝ պարտավոր էր հայտնել, թե որն է այդ տեղեկատվությանը տիրապետող համապատասխան պետական լիազոր մարմինը, սակայն դա չի արել: Տարօրինակ է, որ Տավուշի մարզպետարանն անցած երեքուկես տարում այդպես էլ ի ճշտել 44-օրյա պատերազմում զոհված, անհետ կորած, գերված Տավուշի մարզի բնակիչների թիվը:

ՈՍԿԱՆ ՍԱՐԳՍՅԱՆ
Տավուշ

ԱՅՑ՝ ԵՊՀ

ՈՒՍԱՆՈՂՆԵՐԸ ՄԱՄԱԿՑԵԼ ԵՆ ՑՈՒՅՑԻՆ

«Տավուշը հանուն հայրենիքի» շարժումը՝ Հայ Առաքելական Եկեղեցու Տավուշի թեմի առաջնորդ Բագրատ արքեպիսկոպոս Գալստանյանի գլխավորությամբ այցելել է Երեւանի պետական համալսարան: Շարժման անդամներին դիմավորել են համալսարանի շենքի մոտ հավաքված մեծաթիվ ուսանողներ: Հայտարարվել է, որ առավոտյան ԵՊՀ ուսանողները սկսել են ինքնաբուխ ցույց: ԵՊՀ-ում երեկ առավոտյան դասապրոցես գրեթե չկար, որովհետեւ ուսանողները կամ չեն հաճախել դասերի, կամ ցույց են արել:

«Մենք այսօր եկել ենք հավատով, հույսով, որ այս կռացած վիճակից ոտքի ենք կանգնելու, մենք մեր հայրենիքի համար ենք եկել, պատասխանատու ենք զգում մեզ հայրենիքի համար»,- հայտարարել է ուսխորհրդի անդամներից մեկը:

Բագրատ Սրբազանը դիմել է ուսանողներին? «Հավաքական իմաստով մենք ծնկած վիճակում ենք, որովհետեւ այն առաջնորդությունը, որը մեր երկիրն ունի, ծնկած վիճակում է: Եվ դա արտապատկերվել է մեր ընդհանուր կյանքի վրա: Մեր պայքարն ավելին է, քան հողատարածքը, մեր պայքարը արժեքների մասին է, ստի եւ ճշմարտության մասին է: Եվ դուք առաջին կրողներն եք, սիրելի ուսանողներ»:

Բագրատ Սրբազանն ասել է, որ երթով միանում, գնում են այլ բուհեր, որտեղ ուսանողները սպասում են իրենց: «Հավաքվելու ենք գլուխ գլխի եւ մեր խնդիրները կատարենք: Խնդիրները կատարելու են բոլորիս ջանքերով եւ ներդրումով, ուրիշ տարբերակ մենք պարզապես չունենք», - ասել է նա:

ԵՊՀ ուսանողական խորհուրդը՝ ի դեմս խորհրդի նախագահ Խաչիկ Աբաջյանի, միացել է դասադուլին: Ուսանողները մտել են տարբեր ֆակուլտետներ ու լսարաններ «Ուսանող, ոտքի» վանկարկումներով:

«Սիրելի ուսանողներ, մեր կոչերն անհասցե չեն, դրանք ձեզ են ուղղված: Մենք ձեզ ուզում ենք խնդրել, որ դուք ունենաք դիրքորոշում եւ անտարբեր չլինեք: Մենք համալսարանական ենք, բոլորս նույն համայնքի մի մաս ենք, միացեք մեզ ու զգացեք ձեզ այնքան պատասխանատու, ինչքան մենք ենք զգում, դուք այս պրոցեսի տերն եք», - ասել է ԵՊՀ ուսանողների հետ տարվող աշխատանքների կենտրոնի տնօրեն Դավիթ Ափոյանը՝ դիմելով ուսանողներին:

Որոշ լսարաններում դասերը շարունակվել են, դասախոսներից ոմանք պահանջել են իրենց դասը չխանգարել, իսկ, օրինակ, իրավագիտության ֆակուլտետի դեկանը դասադուլի մասնակիցներին ասել էր, որ Իրավագիտության ֆակուլտետում ոչ ոք դասի չի նստել:

Երեւանի պետական համալսարանի արհմիությունը, իր հերթին, կոչ է արել ԵՊՀ բոլոր դասախոսներին եւ աշխատողներին միանալ համազգային բողոքի եւ խաղաղ անհնազանդության միջոցառումներին:

«Միաժամանակ հորդորում ենք ԵՊՀ ղեկավարությանը որեւէ ձեւով չխոչընդոտել խաղաղ անհնազանդության եւ բողոքի միջոցառումներին միանալու ցանկություն հայտնած ԵՊՀ դասախոսների եւ աշխատողների քայլերին: ԵՊՀ Արհմիությունը այս ընթացքում ուշի-ուշով հետեւելու է ԵՊՀ ղեկավարության բոլոր գործողություններին: Հետապնդման կամ խոչընդոտելու որեւէ դեպք նկատելու դեպքում մենք իրավունք ենք վերապահում մեզ օգտագործելու ՀՀ օրենսդրությամբ չարգելված բոլոր միջոցները՝ ԵՊՀ ղեկավարության նմանատիպ գործողությունները կանխելու եւ աշխատողների իրավունքները պաշտպանելու համար», - ասված է հայտարարության տեքստում:

ԼՈՒՐԵՐ

ԳԻՏՆԱԿԱՆՆԵՐԸ ՆԱԽԱԶԳՈՒՇԱՑՆՈՒՄ ԵՆ

Լոս Ալամոսի ազգային լաբորատորիայի ամերիկացի գիտնականները պարզել են, որ փոփոխվող կլիման կարող է ընդլայնել մոծակների բնակավայրերը, որոնք կրում են մալարիա, դենգե տենդ, Զիկա վիրուս եւ կյանքին սպառնացող այլ պաթոգեններ: Հետազոտությունը հրապարակվել է Journal of Climate Change and Health (JCCH) գիտական ամսագրում:

Մոծակները համարվում են աշխարհի ամենամահաբեր միջատները՝ սուր վարակիչ հիվանդությունների բռնկում առաջացնելու ունակությամբ: Նրանց կրող հիվանդությունները տարեկան խլում են ավելի քան 2 միլիոն կյանք:

Հետազոտողները նշում են, որ ապագա կլիմայի փոփոխությունը կարող է ընդլայնել, կրճատել կամ փոխել մոծակների տարբեր տեսակների աշխարհագրական տիրույթները:

Օրինակ, ավելի բարձր ջերմաստիճանները կարող են հանգեցնել տիրույթի ընդլայնման կամ տեղաշարժի դեպի բեւեռներ, մինչդեռ հասարակածի շրջակայքը կարող է չափազանց տաք դառնալ միջատների համար:

«Մենք պարզեցինք, որ մեր մոդելի բոլոր ինը մոծակների տեսակները կոշտորեն արձագանքեցին կլիմայի փոփոխությանը, ինչը ենթադրում է, որ մոծակների միջոցով փոխանցվող հիվանդությունները շարունակական սպառնալիք են մնալու, քանի որ կլիման տաքանում է», - ասում է հեղինակ Մորգան Գորիսը:

ԱՐԵԳԱԿԻ ԱՄԵՆԱՀԶՈՐ ԽԱՎԱՐՈՒՄԸ

Մայիսի 9-ի երեկոյան Արեգակի վրա տեղի է ունեցել ամենաբարձր՝ X մագնիտուդով բռնկում, այն արդեն երրորդն էր մեկ օրվա ընթացքում, այս մասին հայտնում է ՌԴ Տիեզերական հետազոտությունների ինստիտուտի Արեւային աստղագիտության լաբորատորիայի կայքը:

Նշվում է, որ բռնկումը սկսվել է Մոսկվայի ժամանակով 20.23-ին, առավելագույնը հասել է 20.44-ին եւ ավարտվել 21.00-ին: Ֆլեշը գնահատվում է X1.1:

Հինգշաբթի ավելի վաղ X1.0 հզորության կրկնակի բռնկում տեղի է ունեցել գիշերը, իսկ X2.2 հզորության բռնկումը՝ ցերեկը (այն դարձել է յոթերորդ ամենահզորը արեգակնային ակտիվության ընթացիկ ցիկլում):

Նաեւ մայիսի 9-ին Արեգակի վրա տեղի է ունեցել միջին հզորության ինը բռնկում (մագնիտուդ M):

ԶԲՈՍԱՇՐՋԻԿՆԵՐԻ ՄԱՍԻՆ՝ ՆՈՐ ԿԱՆՈՆՆԵՐ

Հունիսի 1-ից Վրաստանում ուժի մեջ կմտնեն զբոսաշրջիկների համար նոր կանոններ: Ամառվանից Վրաստան այցելող յուրաքանչյուր զբոսաշրջիկ պետք է ունենա բժշկական ապահովագրություն երկրում գտնվելու ողջ տեւողության համար: Այս պահանջը խախտողները ենթակա են տուգանքի՝ մոտավորապես 110 ԱՄՆ դոլարի չափով: Ճանապարհորդները, ովքեր ինքնուրույն պլանավորում են իրենց ուղեւորությունները եւ թռիչքները, պետք է հատուկ ուշադրություն դարձնեն այս պահանջին: Օրերս հայտնի դարձավ, որ զբոսաշրջությունից Վրաստանի եկամուտը գերազանցել է մինչ Covid-ի ցուցանիշը: Հունվար-մարտ ամիսներին երկիր է այցելել ավելի քան 930 հազար զբոսաշրջիկ, որը 11%-ով բարձր է նախորդ տարվա ցուցանիշից:

● Անցած 2 օրվա ընթացքում հանրապետությունում արձանագրվել է ճանապարհատրանսպորտային 15 պատահար. 21 մարդ ստացել է տարբեր աստիճանի մարմնական վնասվածքներ:

ՆԻՍՏ

ԱԶԲ ՌԱԶՄԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ

Ասիական զարգացման բանկի (ԱԶԲ) 57-րդ տարեկան հանդիպման շրջանակներում մայիսի 5-ին կայացել է ԱԶԲ Կառավարիչների գործարար նիստը: Նիստի ընթացքում առանձին ելույթով հանդես է եկել ՀՀ ֆինանսների նախարար Վահե Հովհաննիսյանը:

Նախարար Հովհաննիսյանը վերահաստատել է Հայաստանի հանձնառությունը ԱԶԲ 2030 ռազմավարությանը: Նա նշել է, որ Հայաստանի կառավարությունն իր առաջնահերթ քաղաքականություններում եւ ծրագրերում արտացոլում է այդ ռազմավարության նպատակները: Նա նաեւ ընդգծել է Ասիական զարգացման հիմնադրամ -14 համալրմանը (2025-2028) որպես դոնոր միանալու ՀՀ որոշումը:

Ֆինանսների նախարարն իր ելույթում անդրադարձել է նաեւ այնպիսի խնդիրների եւ մարտահրավերների, ինչպիսիք են՝ կլիմայի փոփոխությունների վտանգը, տնտեսական հեռանկարների անորոշությունը, աշխարհաքաղաքական մի շարք իրավիճակներ եւ այլն: Ըստ նրա՝ այս մարտահրավերներն ընդգծում են միասնական գործողությունների եւ նորարարական գործընկերության անհրաժեշտությունը:

Նախարար Հովհաննիսյանը հատուկ անդրադարձ է կատարել «Միջին միջանցք» նախաձեռնությանը: Աշխարհաքաղաքական լարվածության աճի պայմաններում սովորական առեւտրային ուղիները բախվում են մարտահրավերների: Այս համատեքստում Հարավային Կովկասը եւ Կենտրոնական Ասիան հանդիսանում են կարեւոր այլընտրանքային առեւտրային ուղիներ Արեւելքի եւ Արեւմուտքի միջեւ: Նա ընդգծել է, որ Հայաստանը հանդես է եկել «Խաղաղության խաչմերուկ» նախաձեռնությամբ, որը կարող է ոչ միայն լրացնել Միջին միջանցքը, այլեւ նպաստել տարածաշրջանային երկխոսությանը եւ երկարաժամկետ խաղաղություն բերել տարածաշրջանին: Ստեղծելով լրացուցիչ տրանսպորտային ուղիներ՝ կարելի է բարձրացնել Հարավային Կովկասի աշխարհաքաղաքական նշանակությունը եւ բացել աճի հսկայական ներուժը, որը խոչընդոտվել է տարիների հակամարտությունների պատճառով:

««Հյուսիս-Հարավ» մայրուղու կառուցումը, որն իրականացվում է ԱԶԲ-ի հետ համագործակցությամբ, այս նախաձեռնության կարեւոր բաղադրիչն է, եւ ես հուսով եմ, որ մենք շուտով համաձայնագիր կստորագրենք ԱԶԲ-ի հետ Հարավային հատվածի շինարարությունը սկսելու համար», - ամփոփել է նախարարը:

ՎԵՐԱՊԱՏՐԱՍՏՈՒՄ

ՀԵՐԹԱԿԱՆ ԱՏԵՍՏԱՎՈՐՈՒՄԸ

ՀՀ Կառավարության որոշմամբ՝ հանրակրթական ուսումնական հաստատության՝ հերթական ատեստավորման ենթակա ուսուցչի վերապատրաստման կարգում կատարվել են փոփոխություններ:

Ըստ այդմ՝ ուսուցիչների վերապատրաստումներն այսուհետ իրականացվելու են 12 առանձին բաժիններով, որոնցից յուրաքանչյուրը նկարագրում է ուսուցչի մասնագիտական գործունեության ձեւերը:

Վերապատրաստման չափորոշչով՝ յուրաքանչյուր մասնագիտական գործունեության ձեւի մասով սահմանվել են հետեւյալ չորս մակարդակները.

1. **ՏԱՐՐԱԿԱՆ** - երբ ուսուցիչը գիտի եւ հիմնականում կարողանում է դրսեւորել անհրաժեշտ կարողություններ:
2. **ՁԵՌՆԱՀԱՍՈՒԹՅԱՆ** - այս մակարդակն իր մեջ ներառում է նաեւ տարրական մակարդակը. ուսուցիչը գիտի, կիրառում է իր գիտելիքն ու հմտությունները եւ ստեղծագործաբար մոտենալով՝ կարողանում է լուծումներ գտնել, դրսեւորել նշված կարողությունները՝ գործելով ըստ իրավիճակի նպատակահարմարության:
3. **ՏԻՐԱՊԵՏՄԱՆ** - ուսուցիչը կարողանում է նաեւ աջակցել այլ ուսուցիչներին՝ իրենց կարողությունների բարելավման ուղղությամբ՝ հանդես գալով իբրեւ վերապատրաստող, մենթոր:
4. **ՓՈՐՁԱԳԵՏԻ** - ուսուցիչը հանդես է գալիս մանկավարժական գործունեության նոր մոտեցումների մշակման եւ ներդրման առաջարկություններով, իրականացնում է հետազոտական ակտիվ աշխատանք ինչպես սեփական, այնպես էլ մանկավարժական գործունեության բարելավման ուղղությամբ:

Յուրաքանչյուր հաջորդ մակարդակում ուսուցիչը պետք է տիրապետի նաեւ նախորդների վերջնարդյունքներին:

Ուսուցիչների մասնագիտական զարգացման վերապատրաստումներն իրականացվում են առկա կամ հիբրիդ կամ հեռավար եղանակով: Կազմակերպվող ծրագրի իրականացման համար սահմանվում են հետեւյալ նորմատիվային ծավալները (ակադեմիական ժամ)՝

ա) տարրական եւ ձեռնահասության մակարդակներ՝ 228 ժամ, որից 90 ժամը հատկացված է առարկայական գիտելիքների զարգացմանը:

բ) տիրապետման մակարդակ՝72 ժամ:

գ) փորձագետի մակարդակ՝36 ժամ:



Տարրական եւ ձեռնահասության մակարդակներին համապատասխան իրականացվում է մեկ վերապատրաստում, տիրապետման եւ փորձագետի մակարդակներին համապատասխան՝ առանձին վերապատրաստումներ:

Ուսուցիչն ինքնագնահատման միջոցով որոշում է, թե վերապատրաստման յուրաքանչյուր բաժնից որ մակարդակի վերապատրաստմանն է ցանկանում մասնակցել: Ուսուցչին գնահատում է նաեւ տնօրենը, եւ արդյունքում ձեւավորվում է ուսուցչի կարիքը՝ ըստ բաժինների: Գնահատումն իրականացվում է դպրոցների կառավարման տեղեկատվական համակարգում հարցաթերթիկի միջոցով՝ ինքնաշխատ եղանակով:

Տնօրենի եւ ուսուցչի կողմից կարիքի գնահատման անհամաձայնության դեպքում բարդության համապատասխան մակարդակի վերապատրաստումներին մասնակցելու համար հիմք է ընդունվում տնօրենի կողմից իրականացված՝ տվյալ ուսուցչի կարիքի գնահատումը:

Ուսուցչի մասնագիտական զարգացման կարիքին համապատասխան՝ ուսուցիչը մասնակցում է տվյալ մակարդակի վերապատրաստումներին:

Վերապատրաստող կազմակերպություններն ինքնուրույն են որոշում այն բաժինը (ները), վերապատրաստման մակարդակը եւ եղանակը, որի վերապատրաստումը ցանկանում են իրականացնել:

Մինչեւ վերապատրաստվողի դպրոցի հետ վերապատրաստման պայմանագիր կնքելը կազմակերպությունը դիմող ուսուցչի համար կազմակերպում է վերապատրաստման մակարդակին վերապատրաստվողի համապատասխանության հայտորոշիչ գրավոր ստուգում: Այն կազմակերպվում է տիրապետման եւ փորձագետի մակարդակների ժամանակ՝ տվյալ մակարդակին նախորդող մակարդակի վերջնարդյունքներին համապատասխան:

Տարրական եւ ձեռնահասության մակարդակների վերապատրաստումից առաջ հայտորոշիչ աշխատանք չի իրականացվում:

Տիրապետման մակարդակի վերապատրաստումից առաջ իրականացվում է ձեռնահասության մակարդակի վերջնարդյունքներին համապատասխան հայտորոշիչ աշխատանք:

Փորձագետի մակարդակի վերապատրաստումից առաջ իրականացվում է տիրապետման մակարդակի վերջնարդյունքներին համապատասխան հայտորոշիչ աշխատանք:

Եթե վերապատրաստվողը չունի նախորդ մակարդակին համապատասխան գիտելիքներ, ապա վերապատրաստող կազմակերպությունը վերապատրաստվողին չի ընդգրկում վերապատրաստվողների ցուցակում եւ չի կնքում համապատասխան պայմանագիր դպրոցի հետ:

Վերապատրաստման ավարտից հետո վերապատրաստող կազմակերպությունը չի իրականացնում վերապատրաստվողների գիտելիքների ամփոփիչ ստուգում:

Վերապատրաստման ավարտից հետո վերապատրաստող կազմակերպությունը վերապատրաստվողին տալիս է տեղեկանք վերապատրաստման տեւողության, վերապատրաստվողի բացակայությունների եւ վերջնարդյունքներին համապատասխան կարողությունների զարգացման մասին:

Վերապատրաստման ավարտից հետո նախարարության կողմից իրականացվում է վերապատրաստվածների ամփոփիչ արտաքին գնահատում:

Ամփոփիչ արտաքին գնահատման արդյունքների եւ վերապատրաստման մասին վերապատրաստող կազմակերպության տեղեկանքի հիման վրա վերապատրաստվողը ստանում է համապատասխան կրեդիտ:

Հանրակրթական հիմնական ծրագրեր իրականացնող ուսումնական հաստատության հերթական ատեստավորման ենթակա ուսուցիչների վերապատրաստման ընթացակարգի վերաբերյալ մեթոդական ուղեցույցը եւ տեսաբացատրությունը հետեւյալ հղմամբ:

ՏԱՐԵԿԱՆ ԺՈՂՈՎ

«ԿՈՆՎԵՐՍ» ԲԱՆԿԸ՝ ՎԶԵԲ ՀՈՎԱՆԱՎՈՐ

«Կոնվերս» բանկը ՎԶԵԲ տարեկան ժողովի գլխավոր հովանավորն է: Մայիսի 14-16-ը Հայաստանում կայանալիք միջոցառման շրջանակում ֆինարկումների առանցքում կլինի տարածաշրջանի երկրներին ՎԶԵԲ աջակցությունը անընդհատ փոփոխվող միջավայրի պայմաններում եւ համատեղ ուժերով շոշափելի արդյունքի հասնելու հեռանկարները:

Փորձագետները, բիզնես առաջնորդներն եւ ՎԶԵԲ անդամները մտքեր կփոխանակեն մակրոտնտեսական միջավայրին, կայուն զարգացմանը, ներառական տնտեսությանը, թվայնացմանն եւ տեխնոլոգիաներին վերաբերող, ինչպես նաեւ այլ հարցերի շուրջ:

«ՎԶԵԲ-ը Կոնվերս Բանկի երկարամյա գործընկերն է, որի հետ համագործակցության հարուստ ու արդյունավետ փորձառություն ունենք: Մեզ համար պատիվ է լինել մաս այս կարեւորագույն միջոցառման, որտեղ քննարկվելու են Բանկի համար սկզբունքային թեմաներ: Կոնվերս Բանկի ռազմավարական կարեւորագույն ուղղություններից եւ գործունեության սկզբունքներից են կայուն զարգացումը, կանաչ ֆինանսավորումը, թվայնացումն ու ֆինանսների հասանելիությունը հնարավորինս լայն խմբերի»,-ասել է Ֆինանսական հաստատությունների եւ միջազգային բանկային հարաբերությունների վարչության պետ Նելլի Քոչարյանը:

Միջոցառման շրջանակում Կոնվերս Բանկի նախաձեռնությամբ եւ մասնակցությամբ կկայանա կապիտալի շուկաների զարգացման ներկա միտումներին եւ մարտահրավերներին նվիրված պանելային քննարկում, որին կմասնակցեն նաեւ ՀՀ պետական շահագրգիռ կառույցների ներկայացուցիչներ, ինչպես նաեւ միջազգային գործընկերներ:

«Ժողովուրդ» օրաթերթում եւ Armlur.am կայքում գովազդ, հայտարարություն, հաշվետվություն, ծանուցում տեղադրելու համար զանգահարել 094-455-456 հեռախոսահամարով:

ՄՇԱԿՈՒՅԹ

ՄԻԱՑՈՒՄ

ԴՊՐՈՑՆԵՐԸ ՇԱՐՈՒՆԱԿՎՈՒՄ ԵՆ ՓԱԿՎԵԼ

Հայաստանի Հանրապետություն շարունակվում են իրար հետեւից փակվել ուսումնական հաստատություններ, չնայած այն բանին, որ այս տարվա հունվարի 20-ին Վայքում կայացած հանդիպման ժամանակ Նիկոլ Փաշինյանը հայտարարեց. «Այսօր հանրապետությունում ոչ մի դպրոց չի փակվում, այսօր դպրոց է կառուցվում»:

ArmLur.am-ի խմբագրություն ահազանգ է ստացվել Վանաձորի Սայաթ-Նովայի անվան թիվ 10 ավագ դպրոց ոչ առեւտրային կազմակերպությունից, որ դպրոցն առանց ուսուցչական կազմի տեղյակ լինելու փակվում է:

Դպրոցի աշխատակիցներից մեկը մեզ հետ զրույցում ասաց, որ դպրոցի տնօրեն Խաչատուր Պարանյանը միշտ փափուկ բարձ է դրել նրանց գլխի տակ եւ ասել, որ դպրոցը չի փակվելու, ամեն բան լավ է լինելու:

«Դպրոցի փակման մասին մենք նախապես չենք իմացել, մեր տնօրեն Խաչատուր Պարանյանը միշտ մեր գլխի տակ փափուկ բարձ է դրել, ասել է ամեն բան լավ է, դպրոցը չի փակվելու: Հունիսի վերջին ԿԳՄՍՆ փոխնախարարը եկել է դպրոց՝ երեկոյան ժամի, Վանաձորում եղել են նիստի, երեկոյան 5-ի կողմերը եկել է դպրոցում աշխատողների հետ հանդիպել եւ ասել, որ մեր դպրոցը փակվում է, միանում է թիվ 13 դպրոցին եւ կառավարության որոշմամբ «թիվ 10-րդ դպրոց» անվանումը դուրս է գալիս դպրոցների անվանացանկից: Մեր դպրոցի շենքում պետք է տեղակայվի Վանաձորի բնագիտամաթեմատիկական «Էվրիկա» դպրոցը, շենքը նրանց են խոստացել: Այս պահին 13-րդ դպրոցը շենքային դպրոցներ չունի, ամբողջ այս 23-24 թթ ուսումնական տարին աշակերտները սովորել են Վանաձորի պոլիտեխնիկական ինստիտուտի մի քանի տրամադրված դասարաններում: Իրենց համար պետք է կառուցվեր նոր, չափորոշիչներին համապատասխան շենք, սակայն շենքը չի կառուցվում, իսկ եղած շենքն էլ վերանորոգում են»,- մեզ հետ զրույցում ասաց թիվ 10 դպրոցի աշխատակիցը:

Վանաձորի թիվ 10 ավագ դպրոցի աշխատակիցը նշեց, որ այս պահին 2 դպրոցների աշակերտներմիանում են իրար եւ պետք է գնան պոլիտեխնիկական ինստիտուտ, որտեղ տեղ պետք է տրամադրվի, սակայն իրենց տեղեկություններով պոլիտեխնիկական ինստիտուտն այլեւս չի կարող սենյակներ տրամադրել, քանի որ չունի:

«Մեզ կանգնեցրել են փաստի առաջ, e-draft-ում իրենք հրապարակել են դեռեւս օգոստոս ամսին դպրոցների միացման հարցը, բայց մենք տեղյակ չենք եղել ու e-draft-ում մի նշում չի եղել, որ ինչ-որ մեկը կողմ է դրա համար: Եկել ենք, արդեն կառավարության որոշում է եղել հոկտեմբեր ամսին, որ ֆինանսական մեծ տարբերություն չի լինում 2 դպրոցների միացումից, բայց նպատակահարմար է միացնել 13-ին եւ 10-ի շենքը տալ «Էվրիկային», որովհետեւ «Էվրիկան» ունի մրցույթների, օլիմպիադաների հաղթողներ եւ «Էվրիկայի» աշակերտներն ավելի լավն են, քան 10-րդ դպրոցի աշակերտները: Մենք արդեն 5 անգամ վարչապետին գրություն ենք գրել, որ իրենց ներկայացրած տվյալները սխալ են, ընդհուպ սխալ է ներկայացրած եղել 2 դպրոցների միջեւ ընկած ճանապարհի հեռավորությունները: Այս պահին մեր աշակերտների թիվը, ըստ մեր ունեցած սահմանային տեղի, ավելի շատ են, քան 13 դպրոցինը, քանի որ չունեն շենքային պայմաններ եւ ամբողջ կոլեկտիվը դուրս է մնում: Ճիշտ է, նախարարությունն ասում է՝ կտեղավորենք, բայց մեկ բան է դպրոցում աշխատողն ունենա 20 ժամ, քան մյուս դպրոցում՝ 5 ժամ: Առաջին հերթին երեխաների իրավունքներն են իրենք խախտում եւ երկրորդ հերթին խախտում են աշխատողների իրավունքները»-, ասաց դպրոցի աշխատակիցը:

Աշխատակցի խոսքով՝ վարչապետ Փաշինյանին ուղարկված գրություններին պատասխանել է ԿԳՄՍՆ փոխնախարարը եւ չնայած նրան, որ պատասխանում են՝ պատասխանը չի բավարարում դպրոցի աշխատակիցներին:

«Անընդհատ փափուկ բարձ են դնում մեր գլխի տակ, ասում, որ ամեն բան լավ կլինի եւ ասում են, որ էլ գրություններ մի ուղարկեք, հոգնել ենք ձեր գրություններին պատասխանելուց, միեւնույն է նույնն ենք պատասխանելու»,- նշեց դպրոցի աշխատակիցը:

Նշենք, որ դպրոցի աշխատակիցները տարբեր կառույցների են դիմել, ընդհուպ՝ մարզպետարան, որտեղից պատասխանել են, որ մազպետը գնալու է տարածքն ուսումնասիրելու, սակայն առայժմ, չի գնացել:

Հետաքրքրվեցինք նաեւ՝ արդյո՞ք պատրաստվում են ինչ-որ քայլերի դիմել դպրոցը փակվելու հետ կապված, ինչին ի պատասխան դպրոցի աշխատակիցները պատասխանեցին.

«Չգիտենք, թե մեր հաջորդ քայլերը որոնք են լինելու: Ճիշտն ասած՝ ուզում էինք բունտ անել, ճանապարհը փակել, բայց մարզպետը թույլ չտվեց, մեզ կանչեց լսելու, բայց առանձնապես մարզպետն էլ ոչ մի քայլ չի արել: Բայց մենք հիմա էլ պատրաստ ենք ճանապարհը փակելուն, որովհետեւ մարզպետը խոստացավ, որ կգնա տեղային ուսումնասիրություն կանի, չնայած նրան, որ անցել է 10 օրվա չափով, բայց դեռ ոչ ոք էլ չի գնացել»:

Եվ, չնայած նրան, որ մարզպետը թույլ չի տվել ինչ-որ գործողություն անել, աշխատակիցներն ասացին, որ այնուամենայնիվ պատրաստվում են ճանապարհը փակել:

ԱՆՆԱ ՍՐԱՊԻՈՆՅԱՆ

ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐ

ԱՆԳԼԻԱՅԻ ԲԱԼԵՏԸ. «ԺԻԶԵԼ»

Երեւանի քաղաքապետի հրավերով Երեւանում է Անգլիայի ազգային բալետը՝ Ակրամ Խանի լեգենդար «Ժիզել» բալետային ներկայացմամբ:

Թատերախումբը գեղարվեստական, ստեղծագործական, տեխնիկական անձնակազմերով Երեւան է ժամանել հատուկ չվերթով:

Հյուրախաղերն իրականացվում են Երեւան քաղաքի բյուջեով նախատեսված միջոցառումների շրջանակում: Ամբողջ հասույթն ուղղվելու է «Երեւան բալետ ֆեստ 2024» նախագծի իրականացմանը:

Անգլիայի ազգային բալետի «Ժիզել» ներկայացման ցուցադրությունները կկայանան մայիսի 10-ին, ժամը 19:00-ին, մայիսի 11-ին, ժ. 14:00-ին եւ 19:00-ին՝ Ա. Սպենդիարյանի անվան օպերայի եւ բալետի ազգային ակադեմիական թատրոնում:

Աշխարհի մեծագույն բեմերը նվաճած բալետային ներկայացումը տարածաշրջանում առաջին անգամ է ցուցադրվելու՝ հավակնելով դառնալ տարվա ամենանշանակալի մշակութային իրադարձությունը:

ԿՈՄԻՏԱՍԻՆ ՆՎԻՐՎԱԾ ՀԱՄԵՐԳ

Սփյուռքի Գլխավոր Հանձնակատարի Զարեհ Սինանյանն աշխատանքային այցով գտնվում է Իտալիայում: Միլանի Սբ. Քառասուն Մանկունք եկեղեցու խորհրդի ատենապետ, Իտալիայում սփյուռքի գործերի հանձնակատար Սարո Խուդավերդիի հրավերով՝նա մասնակցել է Կոմիտասի անվան ազգային քառյակի համերգին՝ նվիրված Կոմիտաս Վարդապետի 155 եւ Կոմիտասի անվան ազգային քառյակի հիմնադրման 100-ամյակներին:

Համերգն անցկացվել է Միլանի Սանտա Մարիա դելլա Գրացիե եկեղեցում, որին ներկա են գտնվել նաեւ պատվավոր հյուպատոս Պյետրո Քուչուկյանը, հոգեւոր հովիվ Ներսես աբեղա Հարությունյանը, հայ համայնքի ներկայացուցիչներ, իտալացի երաժշտասերներ: Քառյակը կատարել է հայ եւ արեւմտաեվրոպական կոմպոզիտորների ստեղծագործություններ:

ՄԱՐԶԱԿԱՆ

ՀԱՅ ԸՄԲԻՇՆԵՐԻ ՊԱՅՔԱՐԸ

Հայաստանի հունահռոմեական ոճի ըմբիշները ոչ մի օլիմպիական ուղեգիր չեն նվաճել Ստամբուլում կայացած վարկանիշային մրցաշարում:

Վարկանիշային վերջին մրցաշարում Հայաստանը ներկայացրած հունահռոմեական ոճի ըմբիշներ Գեւորգ Ղարիբյանը (60 կգ), Գեւորգ Թադեւոսյանը (87 կգ) եւ Դավիթ Օվասափյանը (130 կգ) ոչ մի ուղեգիր չնվաճեցին:

Հաջորդիվ պայքարի մեջ կմտնեն ազատ ոճի ընտրանու կազմի ներկայացուցիչները՝ Հայկ Պապիկյանը (74 կգ), Մուշեղ Մկրտչյանը (86 կգ), Սերգեյ Սարգսյանը (97 կգ) եւ Լյովա Գեւորգյանը (125 կգ):

Հայ ըմբիշներից դեռեւս Փարիզի Օլիմպիական խաղերի ուղեգրեր են նվաճել Արթուր Ալեքսանյանը, Մալխաս Ամոյանը, Սլավիկ Գալստյանը, Արսեն Հարությունյանը եւ Վազգեն Թեւանյանը:

ՆՎԱՃԵԼ ԵՆ ՕԼԻՄՊԻԱԿԱՆ ՈՒՂԵԳԻՐ

Հունահռոմեական ոճի ըմբիշներ, Բուլղարիան ներկայացնող Հայկ Մնացականյանը (77 կգ) եւ Ռուսաստանի ներկայացուցիչ Արթուր Սարգսյանը (97 կգ) Թուրքիայի Ստամբուլ քաղաքում ընթացող համաշխարհային վարկանիշային մրցաշարում դուրս են եկել եզրափակիչ եւ նվաճել Փարիզում կայանալիք 33-րդ ամառային Օլիմպիական խաղերի ուղեգիր:

Մնացականյանը կիսաեզրափակչում 1-1 հաշիվը գրանցեց չինացի Ռուի Լյուի հետ, սակայն հաղթանակը շնորհվեց հայ ըմբիշին, քանի որ վերջին միավորը նա է վաստակել: Մինչեւ կիսաեզրափակիչ հասնելը Բուլղարիայի ներկայացուցիչը հաղթել է լիտվացի Պաուլուս Գալկինասին եւ հունգարացի Ժոլտան Լեւային:

Մնացականյանի քաշային կարգում Հայաստանի հավաքականի կազմում ավելի վաղ Փարիզ-2024-ի ուղեգիր էր նվաճել Եվրոպայի եռակի եւ աշխարհի չեմպիոն Մալխաս Ամոյանը: Նույն քաշային կարգում Օլիմպիական խաղերին կմասնակցի նաեւ Ուզբեկստանը ներկայացնող հայ ըմբիշ Արամ Վարդանյանը:

Ռուսաստանը ներկայացնող Արթուր Սարգսյանի քաշային կարգում էլ (97 կգ) Հայաստանի հավաքականից նախորդ տարի Փարիզ-2024-ի ուղեգիր էր նվաճել Օլիմպիական խաղերի ոսկե, արծաթե եւ բրոնզե մեդալակիր, Եվրոպայի 6-ակի, աշխարհի քառակի չեմպիոն Արթուր Ալեքսանյանը:

● *Մայիսի 14-ին՝ժամը 19:00-ին, Երեւանի պետական կամերային թատրոնում կբեմադրվի «Կաբարե» երաժշտական ներկայացումը: Տոմսերի արժեքը՝3000 եւ 8000 դրամ:*

ԵՂԵ՞Ք ՏԵՂԵԿԱՑՎԱԾ

էջը՝ ԱԼՎԱՐԴ ԿՈՇԿԱԿԱՐՅԱՆԻ

ՖԻՆԱՆՍՆԵՐ

ՀԱՐՑ. Ինչպե՞ս կարող եմ ստանալ խաղատան կազմակերպման լիցենզիա:

Արտակ Համբարձումյան (42 տարեկան)

ՊԱՏԱՍԽԱՆ. Խաղատան կազմակերպման լիցենզավորումն իրականացվում է «Լիցենզավորման մասին», «Պետական տուրքի մասին», «Շահումով խաղերի, ինտերնետ շահումով խաղերի եւ խաղատների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքների եւ Հայաստանի Հանրապետության կառավարության 2004 թվականի հուլիսի 29-ի՝ ««Շահումով խաղերի, ինտերնետ շահումով խաղերի եւ խաղատների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի կիրարկումն ապահովելու մասին» թիվ 1164-Ն որոշման համաձայն: Խաղատան կազմակերպման լիցենզիան տրամադրվում է անժամկետ: Լիցենզիան տրամադրվում է նախատեսված բոլոր փաստաթղթերը ներկայացնելուց հետո՝ 23 աշխատանքային օրվա ընթացքում (լիազոր մարմնի որոշմամբ՝կարող է երկարաձգվել եւս 23 աշխատանքային օրով)՝ վիճակախաղերի, շահումով խաղերի, ինտերնետ շահումով խաղերի եւ խաղատների լիցենզավորող հանձնաժողովի եզրակացության հիման վրա:

ՀՀ ֆինանսների նախարարություն

«ԺՈՂՈՎՈՒՐԴ». Հայտատուները խաղատան կազմակերպման լիցենզիա ստանալու համար Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն են ներկայացնում հայտը եւ փաստաթղթերը, որոնք կարող են ներկայացվել առձեռն, փոստով կամ էլեկտրոնային տարբերակով: Հայտատուները կարող են լիցենզիա ստանալու համար անհրաժեշտ փաստաթղթերը ներկայացնել էլեկտրոնային տարբերակով՝ համաձայն Հայաստանի Հանրապետության կառավարության 2010 թվականի սեպտեմբերի 24-ի թիվ 1283-Ն որոշման:

ՄԻԳՐԱՑԻԱ

ՀԱՐՑ. Ապաստան հայցողների մասին տեղեկությունը գաղտնի՞ է:

Աննա Գալստյան (47 տարեկան)

ՊԱՏԱՍԽԱՆ. Ապաստան հայցողների հայտնած տեղեկությունները գաղտնի են: Դրանք չեն հաղորդվում իրենց երկրների իշխանություններին՝ ներառյալ դեսպանատներին կամ որեւէ այլ անձի: Այդ տեղեկությունները այլ անձանց կարող են տրամադրվել միայն ապաստան հայցողի գրավոր համաձայնության դեպքում: Հարցազրույցի գաղտնիությունը երաշխավորված է «Անձնական տվյալների պաշտպանության մասին» ՀՀ օրենքով:

«Փախստականների եւ ապաստանի մասին» ՀՀ օրենքի համաձայն՝ ապաստանի շնորհումը պետական մարմինների կողմից պետք է դիտարկվի Հայաստանի Հանրապետության միջազգային պարտավորությունների ներքո, եւ սույն օրենքի կամ ապաստանի եւ փախստականների վերաբերյալ Հայաստանի Հանրապետության այլ օրենսդրական ակտերի կիրառման ընթացքում որեւէ պարագայում չպետք է ապաստան հայցողի կամ փախստականի մասին տեղեկություններ փոխանակվեն նրա քաղաքացիության կամ նախկին մշտական բնակության երկրի իշխանությունների հետ:

ՀՀ ՆԳՆ միգրացիայի
եւ քաղաքացիության ծառայություն

«ԺՈՂՈՎՈՒՐԴ». Պետական մարմնի կողմից տեղեկատվության փոխանցումը զանգվածային լրատվական միջոցներին միջնորդավորված կերպով հանգեցնում է վերը նշված օրենքի խախտմանը, ուստի նման ցանկացած հայտ մերժվում է Միգրացիոն ծառայության կողմից:

ԼՈՒՐ ԿԱԴՐ

Լուսանկարը՝ համացանցից

Պատանիները աջակցում են «Տավուշը հանուն հայրենիքի» ակցիային. սերունդները հայրենաճանաչ են դառնում մանկուց:

ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹՅՈՒՆ

Մեր թերթը
Բաժանորդագրվելու
համար կարող եք դիմել

«Հայմամուլ» ՓԲԸ
հեռ. 45-82-00, 45-19-11

«Հայփոստ» ՊՓԲԸ
հեռ. 51-45-46, 51-45-47

«Բլից-Մեդիա» ՍՊԸ
հեռ 52-5301

Առաքումը՝ ԱՆՎՃԱՐ:

2011 Ժողովուրդ 1
www.armlur.am

Ձեզ հետաքրքրող ցանկացած հարցով կարող եք դիմել «Ժողովուրդ» օրաթերթի խմբագրություն (**010 54-64-23** հեռախոսահամարով), եւ մենք անպայման կանդրադառնանք ձեր բարձրացրած բոլոր խնդիրներին:

ԱՌԱՋԱՐԿ
հայկական տպագիր մամուլից

«Ժողովուրդ» օրաթերթին բաժանորդագրվելու համար կարող եք լրացնել հետեւյալ բլանկը եւ ուղարկել նշված հասցեով: Ամեն օր թերթը կհասնի ձեր նախընտրելի վայր:

Բաժանորդագրության բլանկ

Անուն՝ ____________
Ազգանուն՝ ____________
Առաքման հասցե՝ ____________
Բջջային եւ/կամ քաղաքային հեռախոս՝ ____________

Հեռ.՝(060) 490049
0023, Արշակունյաց 2, 5-րդ հարկ, 518ս.

ԵՂԱՆԱԿԻ ՏԵՍՈՒԹՅՈՒՆ

Շիրակ	+ 1 + 5 / +10 + 15	
Կոտայքի լեռներ	+ 1 + 3 / +10 + 12	
Կոտայքի նախալեռներ	+ 6 + 8 / +14 + 16	
Գեղարքունիք	+ 2 + 5 / +10 + 12	
Լոռի	+ 3 + 6 / +13 + 16	
Տավուշ	+ 6 + 9 / +15 + 19	
Արագածոտնի լեռներ	0 + 4 / +10 + 13	
Արագածոտնի նախալեռներ	+ 6 + 9 / +15 + 19	

Արարատ	+10 + 12 / +21 + 23
Արմավիր	+ 9 + 11 / +21 + 23
Վայոց ձորի լեռներ	0 + 2 / + 8 + 11
Վայոց ձորի նախալեռներ	+ 8 + 10 / +20 + 22
Սյունիքի հովիտներ	+ 8 + 11 / +16 + 20
Սյունիքի նախալեռներ	+ 8 + 12 / +14 + 17
ԼՂՀ	+ 7 + 10 / +14 + 16
Երեւան	+ 16 + 19 / + 20 + 22

Լրատվական գործունեություն իրականացնող՝
«Ժողովուրդ թերթի խմբագրություն» ՍՊԸ
Հասցեն՝ ք. Երեւան, Աբովյան 22ա/3, հեռ՝ **010 54-64-23**
Պետական գրանցման վկայականի համարը՝ 03Ա089086
տրված է 24.11.2010
Ստորագրված է տպագրության **10.5.2024**
Հասցեն՝ Գեղարքունիքի մարզ, ք. Վարդենիս, Վ.Համբարձումյան 2/21

Գլխավոր խմբագիր՝
ՔՆԱՐ ՄԱՆՈՒԿՅԱՆ

Տպագրված է «ԳԻՆԴ» տպարան ՍՊԸ հրատարակչությունում
Խմբագրություն հանձնված նյութերը չեն գրախոսվում եւ չեն վերադարձվում, **Գ** նշանով նյութերը գովազդային հրապարակումներ են, որոնց համար խմբագրությունը պատասխանատվություն չի կրում:

«Ժողովուրդ» օրաթերթում հրապարակված նյութերը արտատպելիս կամ ընթացիկ մեջբերումներ անելիս պետք է պարտադիր գրառել հետեւյալ նախադասությունը. *«Շարունակությունը կարող եք կարդալ «Ժողովուրդ» օրաթերթի այսօրվա համարում»:*